# ԼՂՀ-Ն ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆ Է

Եթե պաշտոնական Բաքուն հակված է նախագահության ինստիտուտում տեսնել տորպեդահարող հատկություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բանակցությունների գործընթացի վրա, դա զուտ Ադրբեջանի իշխանությունների գործն է, ասել է ԼՂՀ արտգործնախարար Ա. Ղուկասյանը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա մենք, ընդգծել է ԼՂՀ-ի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը, պատրաստ ենք թեկուզ այսօր բանակցությունների սեղանի շուրջ նստել Ադրբեջանի հետ, անկախ այն բանից, թե ով կներկայացնի այդ կողմը՝ սուլթանը, նահանգապետը, գլխավոր քարտուղարը, թե պարզապես Հասան Հասանովը: Գլխավորը, նշեց ԼՂՀ արտգործնախարարը, այնուամենայնիվ, էությունն է, ոչ թե ձևը, որը հաճախ խաբուսիկ է լինում:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*